



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

«Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

06 հոկտեմբեր 2022

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Աստղիկ Բաբայանը, Դավիթ Հարությունյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Տիգրան Նազարյանը, Մարատ Շահրազյանը, Սամվել Ոսկանյանը, Ծովինար Սարգսյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի խորհրդական Գևորգ Սաքանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը և Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ **ավագանին**
ո թ ո շ ե ց.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 6-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 6-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին:

3) Դրամական հատկացումներ կատարելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

5) Գլաձոր բնակավայրում կառուցված գազատարը անհատույց օգտագործման տրամադրելու համար թույլտվություն տալու և Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 111 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

6) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 43-Ա որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0
---------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0
---------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Լ/

